

ՊԱՅՄԱՆՔ
ՊՈՒԼԿԱՐԻԱ

Տարեկան . . . 12 ֆր.

Վեցամսեայ . . . 6 ֆր.

ԱՐՏԱՍՈՒՄԱՆ

Երկու քիւ միկ ծրարով

Տարեկան . . . 14 ֆր.

Վեցամսեայ . . . 7 ֆր.


ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2.60

Վեցամսեայ 1.50 ծրար

ԿԱՆԽԻԿ

Մանուցման սուղը
20 ամսիկով



ԼՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏՈՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԶՈՐԻՓԵՏՈՒԻ ԵՒ ՇԱՐԱԹ

Հրոշրոշիւք եւ չեմ
տրոշիր

ՀԱՍՏԵ

Rédaction du journal

ir vounk

VARNA (Bulgarie)

Редакция

на вѣстникъ

Иравунк

ВАРНА

ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Հարիւր տարի անցեալ ժը-
րանսայի ժողովուրդը փոփոխու-
լից յեղափոխութեանը մէջ երեք
գոյնով գրոշակ մը բարձրացուց-
«ազատութիւն», «հաւասարու-
թիւն», «եղբայրութիւն» վերնա-
գրով, Բայց հասա՞ն ժրանսայիք
իրենց այդ իտեալական նպա-
տակին, Պատմութիւնը բարձրա-
ձայն կը պատասխանէ, ոչ: Հա-
ւասարութեան տեղ մտաւ Պոնա-
փարթ նարօլէսնի միապետու-
թիւնը, յետոյ թագաւորութիւնը,
յետոյ հասարակապետութիւնը,
կրկին յեղափոխութիւնը, կրկին
կայսրութիւնը, կրկին յեղափո-
խութիւնը, կոտորած, աւերմունք,
հրդեհ եւ այլն: Եւ այլն: Մինչեւ
այսօր ալ չկայ ժրանսայի մէջ
իրենց ուղած ազատութիւնը, ոչ
հաւասարութիւնը եւ ոչ եղբայ-
րութիւնը: Ժրանսան ալ այսօր
տեսակ տեսակ խռմբերու եւ կու-
սակցութիւններու բաժանումով
կը հաւաքէ ինչպէս հարիւր տա-
րի անցեալ ժը, թէ և շատ գիտու-
թիւն եւ շատ հարստութիւն ու-
նին:

Եւրոպայի միւս մասերն ինչ-
պէս են: Եթէ մէկը անոնց վրայ
դուրսէն նայի, պիտի ըսէ թէ
աշխարհս իր ստեղծագործու-
թեանէն ի վեր այդ աստիճան
լուսաւորութիւն, գիտութիւն եւ
յառաջգիւղութիւն երբեք ունե-
ցած չէ: Հին աշխարհքը այդ-
չափ համալսարաններ, ահագին
գործարաններ, երկաթուղիներ,
հեռագրական գիւտեր, չորհրդա-

ու հազար ու մէկ տեսակ նորու-
թիւններ երազի մէջ անգամ չէ
տեսած, Վերջերս Սէն-Լուիի մէջ
տեղի ունեցած ցուցահանդէսը
գրեթէ մի քաղաքական անասան-
դաշտ էր հրաշքներու: Անցեալ
ժը. դարու մարդը ընդհանրա-
պէս կը կարծէր, թէ նիւթական
եւ արուեստական աշխարհին մէջ
յառաջգիւղութիւն չառ դրամ կը
ընէ եւ մեզ երջանիկ կընէ: Եւ այդ
գաղափարով ձգեցին ծաղրեցին
ոտնակոխ ըրին ամէն բարոյա-
կանութիւն եւ բարոյական սկզբ-
բունք եւ հետեւեցան նիւթական
զարդացման, եւ իրաւ աննման
կերպով ծայրագոյն կատարելու-
թեան մօտեցան ալ: Բայց այդ
նիւթական եւ արուեստական զար-
դացումը երջանիկ ըրա՞ւ զմար-
դը: Ոչ և ոչ: Այդ լուսաւորեալ
ազգերը եւրոպայի թէ և ըստ ե-
րեւութին իրար հետ բարեկամ
կը ձեւանան, թէ իրենց պետերը
իրար կայցելեն, իրար կը դըր-
կեն եւ կը համբուրեն, բայց
իրենց ներքին էական բնութիւ-
նը եւ նպատակը իրար կողմու-
նէրու արեւը քամել եւ իրարու
երկիր յափշտակել է: Աւստրի-
ան իտալիայի հետ չը պատե-
րալմեցա՞ւ, Սարաւենիան իտա-
լիայ միւս պետութիւնները չը
կլկե՞ց, Բուլաւիան եւ Աւստրիան
միասին Տանիմարքայէն չը խը-
լեցին Շլէզվիկ-Հոլշթէյնը եւ յե-
տոյ Գերմանիան չը ջարդե՞ց
գլխաւորիւն: Եւ ինչ սոսկալի ա-
րիւնահանգութիւն եղաւ լուսաւոր
Գերմանիոյ եւ լուսաւոր ժրանսա-
յի մէջ, որով գերմանացին ֆը-
րանսացիին 5,000,000,000 ֆրանկ
եւ Ելլաւ-Լօթրինկէնը իւրացուց-
նիւթական եւ արուեստական զար-
դացումը երջանիկ ըրա՞ւ եւրո-
պան: Երբեք, եւ միթէ միայն
ազգերն են որ իրարու դէմ սրած
են եւ կը սրեն իրենց ժանիքնե-
րը: Ով որ կը ճանչնայ եւրո-
պան, գիտէ որ մի պետութեան
կամ ազգի անհատ անդամներն
ալ ընդհանրապէս իրարու միտն
ուտելու կը ջանան: Ո՞րքան ո՞ր-
քան կուսակցութիւններ, նա-
խաններ, ատեւութիւններ եւ

անթիւ ու անհամար յանցանք-
ներ եւ ոճիրներ թէ՛ միմեանց
դէմ թէ՛ ընտանիքներու մէջ
կան եւրոպա: Հազարաւոր ու
բիւրաւոր օրինակներէն մի-
միայն սա մէկը յիշենք, որ
Սաքսոնիայի քանի մը զաւակ-
ներու տէր գահաժառանգուհին,
որ հիւս թագուհի պիտի ըլ-
լար, իր զաւակներուն ուսու-
ցիչ երիտասարդ փերոնին հետ
անբարոյական կեանք վարելով
ինքզինքը, իր ընտանիքը ու
իր ազգը խայտառակեց: Ա-
սոր պէս օրինակներ եւ ու-
րիշ անասելի ոճիրներ շատ
չառ կան: Եւրոպան կը կործա-
նի, քարուքանդ ըլլալու վրայ է,
քանի որ անցեալ դարու գիտ-
նական, ուսուցիչ, հեղինակ
ըրազմիք մեծաւ մասամբ քրիս-
տոնէութեան դէմ գոչեցին եւ
իրենց ազգերուն մէջ հիմնադ-
րակ ըրին բարոյական կեանքը
եւ սկզբունքները:

Տեսէ՛ք ինչ սոսկալի բաներ են
ծաղեր ատկէ: Այս վերջին ե-
րեք տարուան ընթացքին մէջ
Գերմանիոյ երիտասարդութեան
ոճրագործներու թիւը 3,500 ալ
չառցեր աւելցեր է: 18 տարե-
կանէն վար երիտասարդ ոճրա-
գործները, որոնք գատարաննե-
րէ գատապարտուեցան՝ 1896
թւին 44,212 հոգի, 1897 ին
45,251. 1898 ին 47, 975. 1899-
ին 47,476. 1900 ին 48,629 եւ
1901 ին 49,528: Մինչդիւ չափա-
հաս ոճրագործներուն թիւը 100ին
12 է շատցած, երիտասարդնե-
րունը հարիւրին 15 ով կ'աւել-
նայ: Ասիկայ որոշ նախագուշա-
կում է գերմանական ազգի անկ-
մանը եւ կործանմանը, եւ ո՞վ է
ատոր պատճառը: Նախաւաւ
անհաւատ ծնողները, յետոյ ան-
հաւատ ուսուցիչները, որոնք
գաղափարներ մէջ քրիստոնէա-
կան հաւատք ծաղրելով ու քան-
դելով իրենց ազգը կը տապա-
լեն:

Ասկէ ինչ կը սորվինք մենք
Հայերս: Սա թէ «դուք, ով մեր հայ դըպ-
րոցներու անհաւատ անկրօն ու-
սուցիչներ, որ մեր ապագայ սե-

րունքի առջեւ քրիստոնէական
հաւատքը ոտնակոխ ընելով ա-
նոնց բարոյականութիւնը հիմ-
նայատակ կընէք, դուք ատով կը
կործանէք ու քարուքանդ կընէք
մեր հայ ազգը: Իսկ կը կար-
ծէք, թէ միայն կրօնքը կը քան-
դէք, իսկ բարոյականութիւնը
կը պաշտպանէք ու կուսուցանէք:
Ասիկա մեծ սխալ է: Զրկայ բա-
րոյականութիւն առանց Աստու-
ծոյ երկրաշէն ու Աստուած չըկայ
առանց Յիսուս Քրիստոսի: «Ով
ծնողներ եւ հեղինակներ, զգու-
շացէ՛ք հայ ազգին վնասելէն.
գիտցէ՛ք, «թէ որ մէկը Աստու-
ծոյ տաճարը կ'ապականէ, Աստ-
ւած անիկայ պիտի ապականէ,
ինչու որ Աստուծոյ տաճարը
սուրբ է որ դուք էք»: Ա. Կորնթ. Գ. 17:

Ա.Բ. ԱՄԻՐԻԱՆԵԱՆՑ

Դիտ. — Պատուելի յողուածա-
գըրին «բարոյականութիւնը մի-
միայն քրիստոնէութեան մէջ»
տեսնելու հայեցակէտին առանց
բոլորովին համակարծիք ըլլալու
կը հրատարակենք նոյնութեամբ
այս յողուածը: Նաեւ մեր կար-
ծիքն է թէ, վերջին տարիներ
ու մէջ ոճրագործութեանց հե-
տըզհետէ աւելնալուն մէկ գըլ-
խաւոր պատճառն է անտեսական
կամ ապրտոսի պայմաններուն որ
ըստ օրէ սեղմուիլը եւ պահանջ-
ներուն բազմապատկուիլը:

Ե.Մ.Բ.

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՆԿԻԱ

Թագաւորը թագուհին ընկերակ-
ցութեամբ փետր. 1 ին րացաւ: Լօր-
տերու խորհրդարանը սովորական ա-
րարողութեամբ:

Թագաւորին գահաձառը կը հաս-
տատէ թէ անգլիական կառավա-
րութեան յարաբերութիւնները ուրիշ
պետութեանց հետ կը շարունակուին
բարեկամական ըլլալ: Անգիալ տար-
ւոյ փետրվարին սկսող պատերազ-
մը ըսաւ զժախտաբար կը շարունակուի
տակաւին: Անգլիա միշտ կատարած

ՊԱՐԱԿԱՍՏԱՆ

ՈՒՂԵՒՈՐԱԿԱՆ ՆԻՇԵՐ

Մէրէնակց գործը ենք գտնիս անցնելով անհոտոր այգիներէն եւ պարտէզներէն, որք ցիւխից շինուած բարձր պարիսպներով պատուած՝ ցոյց են տալիս շնորհիւ ժողովուրդի աշխատասէր բնաւորութիւնը. երկուստեւ ուր ճանապարհներէն անց կենալիս՝ տեսնում ենք ցածր աղբիւրներ քաղցրի ալի եւ ալի մասերում, որտեղից սափորներով ջուր են վերցնում Պարսկահիներ գունաւոր քաւանների մէջ փաթատուած, բայց երբեմն ցոյց են տալիս իրանց դէմքը, առնաւորապէս թուրք, երբեմն սպիտակ. նրանց ներքին հագուստը բոլորովին հաշիւ տալիս է. կարճ մի անպարտապիկ հագուստներն են հասնող, մի շապիկ, որ ստէպ չի միանում ստորին հագուստին, եւ նրա բաց կրծքից միշտ երեւում են մի գոյգ ըստինք. Փոքրիկների հանգուստն էլ միեւնոյն ձեւով է, միայն աւելի խնայուած։ Մի ժամից հալու գուեր ենք ելնում պարսպապատ այգիներից եւ մտնում բաց դաշտի մէջ, աւելի ճոխ եւ գեղատեսիլ երեւոյթով, հանդիպում ենք հին գաւառական շէնքերի, որոց մասին յիշատակելու արժանի մի բան չի նշմարւում։ Գիւղեր՝ նոյնպէս միակերպ կարգ ու սարքով, միայն մեծի եւ փոքրի տարբերութեամբ, իջեւաններ՝ զարձեւել նոյնը անկարգ ու կեղտոտ, միայն ամէն տեղ դէպ ի մեզ մի ձգտում է երեւում ժողովրդի կողմից, հաճոյանալ եւ փող կորզել մեզանից, որչափ կարելի է աւելի, ինչ միջոցով էլ լինի, եւ մեք անշուշտ ենք իհարկէ որչափ թնկարում է մեզ մեր պարտաւորութիւնը։

Ընդհանրապէս շատ են երևում կանաչ հագուստով կամ գոտիով մեծ ու փոքր պարսիկներ, որոնք Մարգարէի ձեռներն են եւ կոչւում

են ախիս։ Պարսիկ ժողովուրդը ինչպէս մի ազգ՝ զուտ կրօնական ազգեցութեան տակ դանուող յորգում է իւր սէրներին, որոց արուած են մասնաւոր սուանձնաշնորհմունք, իսկ Սէիանէրից աւելի յորգում ենք են, որք փողոցներում, գիւղերում, ճանապարհներում եւ վերջապէս միշտ ու ամեն տեղ քարոզում են եւ ժողովում կրօնը. եւ քարոզում են հաւատալով թէ խիստ ջերմեանից կերպով. եւ այդ իսկ պատճառաւ Պարսկաստանում կրօնի ոյժը մնում է միշտ անխորտակելի. զեկաւարում տեղական ամբողջ աշխարհավարութիւնը։ Պարսկաստանում Միւսէիսի (գինպիս) ձայնը աւելի զօրեղ եւ ազդու է քան քաղաքական իշխանութեան հեղինակութիւնը։ Քիչ անգամներ չի տեսնուի մենք փողոցային քարոզչին, որ ձեւովով չոր կայի երկարութեամբ հազարաւոր անդադարձութեամբ, սրտազրաւ ձայնով, ձեւով ու եղանակով քարոզում եւ ուսուցանում է ամբողջ շուկայի աշխատողներին կրօնի այս կամ այն մասը, եւ 1—2—3 ժամուայ իւր հողեկան աշխատութեան փոխարէն մի քանի սեւ փող ստանալով գոհութեամբ մեկնում է, ուրիշ տեղ էլ կատարելու. իւր պարտքը՝ ձիւղ այնպէս ինչպէս անում էին Քրիստոսի առաքեալները։ Մեր քարոզիչները մանաւանդ միսիստիկները կարող են այդ Սէիանէրից քարոզելու կերպի օրինակ վերցնել. նրանք՝ որ Աստուածաբանական կուրսեր աւարտած, 30—40—50 լիւրաներ, ստիքիկներ ամսական ստանալով սպասում են, որ կիրակէ օրեր հաւատացեալներ գան եւ սովորին իրանցից՝ ինչ որ արդէն գիտեն նոքա. Միսիսիսներ, այո՛, որոնք մի հասարակ ճեղքիչի չափ էլ օգտակար եղած չեն իրանց կոչումի անպարէզում, ինչ որ տարիներ առաջ Ամերիկայում փրփրականտի մեծ ժողովում հաստատուած է։ Քարոզիչ Սէիանէր չորսութիւն է գտնուած եւ գործում, վասնզի իւր քարոզչական

նախ ինքն հաւատում է, իսկ մեր կրօնաօրհները ինչով կարող են հաստատել, թէ իրանք հաւատացեալներ են, յոկ ի օրոքով ֆրազներով, տիպովով, թէ՛ ձեռնարկութիւնով. ք. գուցէ իրանց առատ վճարումով ու ձոն կեանքով։ Իւր կրօնը դրանք զօրազդ յաջողութիւններ են, անօգուտ յաջողութիւններ եւ՝ իրանց եւ՝ ժողովրդի համար։

ՃԻԿԻ

ՓԱՍՏ ՈՉ ԹԷ ԽՈՍԻՔ

Լրագրական էջերը, անձնական անգուսպ կրթերով բնաւորելու համար սահմանուած չեն։ Բոլոր հասարակական նշանակութիւն ունեցող երեւոյթները, ինչին նոքա մեծ թէ փոքր, միեւնոյն է պէտք է այն տեղ ներկայացուին ճիշդ գոյններով, նոյնութեամբ։ Երբ գրողին թեւադրողը, առաջնորդողը, հակակրօնական ոգին է, այն ժամանակ իրերը բոլորովին կայլակերպուն, կայլանդակուն։ Իսկ միամիտ ընթերցողը, միակողմանի դատողը, բնականաբար, կը մոլորուի։ Կատարուած ամեն մի գործի վերայ պէտք է միայն փաստերը խօսին, հակառակ պարագային, ճշմարտութեան կշիռը, իւր նօտրի հաւատարակութիւնը կը կորցնի։ Ո՛վ չգիտէ թէ «պղտիկ» մարդը, «պղտիկ» էլ գործերով միայն կարող է զբաղուել։ Բայց մեծ մարդը, ինչպէս իրեն թոյլ կուայ «պղտիկ» մարդոց գործերին նշանակութիւն տալ եւ խօսիլ։ Եթէ, մեծ մարդը մի որ եւ է գործի կը, մասնակցի՝ նշանակում է որ նա անպայման «պղտիկ» գործ չպիտի լինի։ Սա՛ տրամաբանական է կարծեմ։ Ապա ուրիշն ինչո՞ւ կանուանեն «պղտիկ» այն գործը՝ երբ մեծ մար-

դիկ իրենք էլ յանձն են տուած ուրախութեամբ մասնակցել նորան։ Զէ՛ որ այդպէսով հակառակութեան մէջ են ընկնում։

Ասացէք, խնդրեմ, միթէ՞ «յաւակնոտութիւն» է, երբ մի մարդ հասարակական՝ թէ՛ չափ համաս, «պղտիկ» բայց օգտակար մի գործի ձեռնարկելով, անշահախոյրարար կաշխատի։

Միթէ՞ «Գոնքիչոտութիւն» է, երբ մարդ շաքարեղէնով այդ գործի իրականացման համար աշխատել յետոյ, վերջին պահուն մասնակցողներին բացարձակ հակառակութիւնը եւ հրաժարումը տեսնելով՝ բողբոջ կը բարձրացնի։

Այո, Սասունի եւ Տարսի թըշւառ արկածախնդրի համար մի ներկայացում էր արուելու. եւ խափանցին։

Այս փաստ է։ Եւ գործով, անշուշտ, ուրիշ ոչինչ չարին այդ հայ երիտասարդները, բայց եթէ, կեանքի բեմի վրայ անժամանակ մի կատակաւ երեւոյթիւն խաղացին։

Ուրիշ ինչ անուն տալ, վայել էր։

Ո՛վ տուեալեցաւ . . .

Վառնա Ս. Մ. ՄՈՑԻԿԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ

Ամենայն Հայոց Վեհ. կաթողիկոսը կալուածներու խնդրոյն համար նոր խնդրագիր մը պատրաստած ըլլալով, Զարին կը զըրկէ պատուիրակութեան մը միջոցաւ, որ կը բաղկանայ Գիշնէվի առաջնորդ Տ. Ներսէս արք. Խիւսափէրեանէ եւ Տ. Սեբաստիան վարդապետէ։ Տ. Ներսէս արք. պիտի պատարարէ Մոսկուա հասած եւ սիրալիր ընդունելութիւն գտած է թէ՛ կառավարչապետ մեծ դուքսէն եւ թէ՛ տեղւոյն

զամին։ Մի՛ մեանիւ իշուկս, զարուն պիտի զայ՝ առուայտ պիտի ուտես»։ Ու Հայոց պաշտպանութեանը համար սատարողութիւն գիտնելով կը նմանցնէր «ամենին պահպանութիւնը արջէն խնդրելու» միամտութեան։ Կը ջանար ամէն գործ կարճ երկայն իր ձեռքովը կարելի ընկնել։ Մերթ կծու լեզու, երբեմն աղաչանք, այսօր սպառնալիք, վաղը քանի մը դահեկան, ու ծանր պարագաներու մէջ քանի մը մէճիտ մեծապէս նպատակներն զեղին կրած առաւարտներուն թնկեալմանը։

Կանգնաբաշտնար, թէ արգիտութիւնը աղտոտութիւնը, ուսեալի անհոգութիւնը ժողովրդին շատ աւելի աղիտարիւր են քան կառավարական հարստահարութիւնները։ Հայ գեղացին այդ չարիքներուն դէմ մինչեւ արտիճան մը սպասնովելու համար ո՛չ Պերսիսի դաշնադրին ո՛չ Պատրիարքարանին, ո՛չ Դրան միջամտութեանը ակնդէտ սպասելու պէտք կար։ Ինքը Պոլսէն մէկ երկու թերթ կը ստանար, եւ գրքեր ալ կ'ընդունէր։ Մանաւորապէս առողջարանական հրատարակութիւններն էին իւր հետաքրքրութիւնը գրաւողները։ Կը ցատէր սա. կայն որ Պոլսոյ մամուլին մէջ քաղաքական անպէտ տեղեկութեանց եւ խորհրդածութեանց շատ լայնիկէ բաժին մը յատկացուելով, անպին կը մոռցուին այն նիւթները, որոնց ընթերցումն ժողովուրդը՝ մանաւանդ երկրին ժողովուրդը, կրնար սքանչելապէս օգտուել իւր կեանքին բարոյական ու նիւթական բարեփոխման համար։

Կարգադրանքներն ստիպաները կը ջանար հաւաքուր եղանակ չափ գործադրել տալ։ Օրինաւոր համար, զեղը առատ ջուր ունէր, ու տէրաէրը ծայրայեղ խստութեամբ հսկեց ժողովուրդին մաքրութիւնը։ Աղէկ չլուացուողներուն հազարգութիւն չէր տար. «Աստուած ո՛չ միայն մաքուր հողով, այլ եւ մաքուր մարմնով ալ պէտք է ընդունիլ» կը խրատէր։ Պոլսոյ գաղտնի իւր աշակերտներուն յանձնարարից կարգ մը բնութեցիկ գեղեր խրկել, ի միջի այլոց՝ քիմիկ։ Հիւանդները կը դարձանէր առողջարանական ու բժշկական հրատարակութեանց օգնութեամբ։ Լրագրիչներուն մէջ խողին օգտակարութեան վրայ տեղեկութիւններ կարգաւոր, որոնց մահմէդականներուն տակի կենդանիէն գեղը քաւի մը հատ մացնել։ Ըրաւ չըրաւ մինչեւ երգուումէն խող ճարեց ու գեղը բերել տուաւ եւ արտերը սապից։ Բաղձմանը կ'աճէր ու կը շատնար առանց ժողովրդին բեռ մը ըլլալու, վեց ամսին անգամ մը տանհինգ քան ձագ ցնկնելով։ Տարին հալու մէկ երկու անգամ միսի երես տեսնող գեղացին, հիմակ յաճախակի խորովածի հա՛ կ'անէր։

Այս խորագրութեանը գեղին ապագային վերայ օգտակարապէս ազդելուն ատիժ մը եղաւ։ Օրին մէկը թիւք գիւղերուցը այդ գեղը իջան, ուր շատնց էր այցելած չէին։ Ուղեցին, ըստ սովորութեան, կերակուելի, բայց խողէն զատ ուրիշ անասուն չտեսան։ Հարկաւորապէս սաստիկ բարկանալով ոչսը ծեծեց։ Տէրաէրը չուտ վրայ հասաւ. ողբաց խաշնա-

մանին ըրած կոտորածներուն վրայ։ Ըսաւ. թէ իրենք ալ աղքատութեան օտարալ աղաւտ կենդանին կը պահէին։ Գանդառեցաւ եւ բաշտութեան մասին, ու խօսելով խօսելով, հարկաւորապէս մինչեւ իր անալը տարաւ։ Հոն քանի մը հաւկիթ ճարեց, ճուտ մը մորթեց եւ մարգուն հրամցուց։ Հասկցուց թէ «ուսեցածն չունեցածն են ան էր»։ Ետքէն ալ թիւքին տիր տառաւարածք մը գրաւ։ Զինւորականը՝ կառացած՝ գնաց զօրքերը վերցուց «տոմազիկներն գեղը ուտելիք չկայ» ըսելով։ Սնցան դացին մէկ երկու ժամ անդին դանուող թիւք մեծ գեղ մը։ Հոնտեղի քիւրքերը գիտէին թէ իրենց դրացի հայոց գեղը խող կար։ Երբէն ճոնաւարեմ ֆոյլի — խողներուն գեղը — կանուանէին զայն. զօրքերն ալ գործը մեծցուցին. ամբողջ գեղը իրենց աչքին խողով ծածկուած երևցեր էր։ Այդ այցէն յետոյ, «տոմազիկներն քէյօնն» ժողովուրդին բերանը «Տոմազ քէյօ» ի փոխուեցաւ ու մինչեւ իսկ կէս պաշտօնական յորջորջման պէս բան մը եղաւ։ Ենթոյն խողերու համարին, ալ այդ կողմէն անցնող դարձող անօթի զօրքերը գեղը կանգ չէին առնէր։

(Շարունակելի)

